ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է օրենքի պահանջից, քանի որ.

1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և/կամ վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին, իսկ տեղական տուրքերի և/կամ վճարների արտոնություններ են տեղական տուրքի և/կամ վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և/կամ վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքը և/կամ վճարի վճարումից ազատումը:

Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը իրականացվում է Վաղարշապատ համայնքի բյուջեից՝ երեխա-թվով:

2. Վաղարշապատ համայնքում նախադպրոցական կրթության ոլորտում տեղական վճարների գծով արտոնություններ գործել են. հիմք ընդունելով այդ փաստը՝ Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման դեպքում բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

3. Ելնելով ներկա սոցիալ-տնտեսական վիճակից, նպատակ ունենալով աջակցելու և մեղմացնելու համայնքում սոցիալական լարվածությունը, ինչպես նաև խթանելու համայնքում նախադպրոցական կրթության կարևորությունը և այն հասանելի դարձնելու համար տարբեր սոցիական խմբերի անձանց՝ անհրաժեշտություն է առաջացել նոր ձևաչափով սահմանել 2024 թվականին Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարների գծով արտոնություններ:

4. Սույն որոշմամբ սահմանվում են նաև այն փաստաթղթերը, որոնց ներկայացումն անհրաժեշտ է տեղական վճարների գծով արտոնություն սահմանելու համար: